

Հ. Հ. Մովսիսյան

ԻՐԱՆԻ ԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԱՎՈՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷՋԵՐԻՑ

Համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին և նրանից հետո ընկած ժամանակաշրջանում, երբ Իրանի ժողովուրդը լարված պայքար էր մղում երկրի ներքին ռեակցիայի և անգլո-ամերիկյան իմպերիալիստների քայքայիչ քաղաքականության դեմ, գրականության ասպարեզ իջան մի շարք պրոգրեսիվ գրական դեմքեր, որոնց գեղարվեստական ստեղծագործություններում ճշմարտացիորեն արտացոլվեցին Իրանի հասարակական կյանքի ախտերը, աշխատավորության զրկանքներն ու պահանջները¹։

Քաղաքական իրադրություններից բացի, իրանական գեղարվեստական արձակի զարգացման վրա մեծ ազդեցություն են ունեցել ռուս առաջավոր և սովետական գրողների (Դոստոևսկի, Գոգոլ, Ջեխով, Գորկի և այլն) ստեղծագործությունները, որոնք թարգմանվել են պարսկերեն լեզվով²։

Այդ նույն ժամանակաշրջանում իրանա-սովետական կուլտուրական կապի կազմակերպության օրգան «Փայամե նոու» («Նոր պատգամ») ժուռնալի հրատարակությունը մեծապես նպաստեց սովետական գրականության տարածման գործին Իրանի հասարակայնության մեջ, Իրանի դեմոկրատական մամուլի («Մարգոմ», «Ռահրար», «Փարվարեշ», «Դուսթե Իրան») էջերում լույս տեսան մարքսիզմ-լենինիզմի կլասիկների մի շարք ստեղծագործությունները։ Գեղարվեստական թարգմանության մեջ հատկապես ուշադրության արժանացան Ալ. Տոլստոյի, Ի. Էրենբուրգի, Մ. Շոլոխովի, Լ. Սոբոլևի, Ն. Տիխոնովի Հայրենական պատերազմի կյանքն արտացոլող պատմվածքներն ու վեպերը։

Երկրի կուլտուրական կյանքի զարգացմանը նպաստեց նաև Իրանի մի շարք մտավորականների ներկայացուցիչների այցելությունը Սովետական Միություն։ Այսպես, 1945 թ. պոետներ՝ Մալեք-Օշ-Շոարայե Բահարը, գրականագետ-պատմաբան Սաիգ Նաֆիսին և ուրիշները ներկա գտնվեցին Ադրբեջանում սովետական կարգերի ստեղծման 25-րդ տարեդարձի հանդիսավոր տոնակատարությանը, 1946 թ. իրանական հայտնի գրող Սադեղ Հեդայաթը հրավիրվում է Տաշքենդ, որտեղ մասնակցում է Միջինասիական համալսարանի հորեյանական սեսիային։ Նույն թվականին գրականագետների մի այլ խումբ հրավիրվում է Սովետական Ուզբեկստան, ներկա գտնվելու ուզբեկ հռչակավոր բանաստեղծ՝ Ալիշեր Նավոյի ծննդյան 500-ամյա տարեդարձի տոնակատարությանը։

Իրանի հասարակությունն իր հերթին հանդիսավոր կերպով նշեց ռուս մեծ առակախոս Դոլիդովի մահվան 100-ամյակը և Ջեխովի 40-ամյա հորելյանը։

1 Հոդվածում նկատի է առնված գլխավորապես արձակ գրականությունը։

2 Տես А. З. Розенфельд, Горький и современная персидская литература, Вестник ЛГУ, 1951 г.; А. П. Чехов и современная персидская литература, Вестник ЛГУ, 1954 г.

Իրանի հասարակայնության ուշադրությունը սովետական առաջավոր մտքի ու գրականության նկատմամբ չի կարելի պատահական ելունայթ համարել: Այդ գրականության մեջ հստակորեն արտացոլված է այն բոլոր սուր հակասությունների հանդույցը, որն իշխում է կապիտալիստական աշխարհի հասարակական կյանքում: Սովետական գրականության էջերում ընթերցողը գտնում է իրեն հետաքրքրող բոլոր տեսակի հարցերի պատասխաններ: Պատահական չէ, որ 40-ական թվականներին ավելի քան 200 ստեղծագործություններ են հրատարակվել սովետական ու մինչ սովետական շրջանի հեղինակներից³: Նոր բեկում առաջացավ Իրանի առաջավոր ինտելիգենցիայի իդեոլոգիական ֆրոնտում տարած աշխատանքում: Դրա լավագույն ապացույցն էր իրանական գրողների առաջին կոնգրեսը, որն անցավ գրականության ժողովրդայնության համար պայքարի նշանաբանով: Այդ միտքը բավական հստակ արտահայտված է հիշյալ կոնգրեսի նախագահ հռչակավոր ղեմավորատ պոետ՝ Մալեք Օշ-Շոարայի ելույթում: Դիմելով քրիստոնեական գրողներին նա ասաց. «...Գրականությունը պետք է ...ձգտի ծառայել ժողովրդին և նրա շահերին, պետք է պատասխանի նրա պահանջներին և խոսի նրա լեզվով»⁴:

Ռեալիստական մեթոդի վարդապետ հոգատարությամբ է տողորված նաև իրանական գրողների կոնգրեսի որոշումը: Որոշման երկրորդ կետում ասված է. կոնգրեսը կոչ է անում գրողներին ու պոետներին արտացոլելու իրենց ստեղծագործություններում ժողովրդի խոհերը և շնչով լիլ իսկական ուղուց, փնտրել նոր ձևեր ու ստեղծագործական մեթոդներ, որոնք կհամապատասխանեն ժամանակակից կյանքի պահանջներին, վարդապետել զիսական առողջ քննադատություն, որպես մեծ գրականություն ստեղծելու անհրաժեշտ պայման⁵:

Այսպիսով 40-ական թվականները հանդիսանում են իրանական գրականության (հատկապես արձակի) ինտենսիվ զարգացման ժամանակաշրջան: Կանգնելով ժողովրդի շահերի պաշտպանության գիրքերում մի շարք գրողներ զարձան ավելի հաստատակամ, ավելի օպտիմիստ իրենց հայացքների մեջ: Քաղաքական պայքարի անհրաժեշտությունը դարձավ սկզբունք և ուղեցույց հանդիսացավ նրանց հետագա աշխատությունների զաղափարականության վերելքի համար:

Գեղարվեստական արձակի մեջ իրենց ստեղծագործական ծաղկման շրջանն ապրեցին անվանի գրողներ՝ Սադեկ Հեղայաթը, Բանաստեղծ-արձակագիր՝ Էհսան Բարարին (Աֆշին), Ա. Օմիդը, Փարվինը, Էթեմադ-զադեն (Բեհադին), Ա. Նուշինը և ուրիշներ:

Պատերազմի տարիներին և նրանից հետո ընկած ժամանակաշրջանի աչքի ընկնող արձակագիրներից մեկը հանդիսանում է տաղանդավոր գրող, հրապարակախոս և հասարակական գործիչ Բուդրոգ Ալավին:

Բուդրոգ Ալավին ծնվել է 1908 թ. փետրվարի 14-ին Բեհրանում վաճառականի ընտանիքում: 1922 թ. նա մեկնում է Բեռլին, որտեղ և ստանում միջնակարգ և բարձրագույն կրթություն: 1929 թ. Ալավին վերադառնում է հայրենիք: Միառժամանակ նա ապրում է Ռաշտ քաղաքում: Այստեղ նա թղթակցում է տեղում հրատարակվող «Փարվարեշ» թերթին: Գալով Բեհրան Ալավին պաշտո-

3 Տե՛ս Դ. Ս. Комиссаров, Очерки современной персидской прозы, М., 1960 г. էջ 80.

4 «Նախոսթին կոնգրեսի նախաանդեղան Իրան», Թեհրան, 1946, էջ 8:

5 Նույն տեղում, էջ 303:

նավարում է արհեստավորաց դպրոցում, որպես գերմաներեն լեզվի ուսուցիչ։ Միևնույն ժամանակ նա համագործակցում է ազատության համար պայքարող իր ընկերների անլեգալ կազմակերպության աշխատանքներին, որի պատճառով էլ 1937 թ. իր համախոհ ընկերների հետ մեկտեղ ձերբակալվում և նետվում է բանտ։

Բանտից ազատվելուց հետո, 1941—1952 թթ. Բ. Ալավին ակտիվորեն մասնակցում է իրանա-սովետական կուլտուրական կապի կազմակերպության աշխատանքներին և ստանձնում է նույն կազմակերպության օրգան «Նոր պատգամ» հանդեսի պատասխանատու խմբագրի պարտականությունը։ Բ. Ալավին պարսկերենի է թարգմանում Ա. Ջեխովի «Բալենու այգին», Ս. Մարշակի «Տասներկու ամիսներ»-ը, Ֆ. Շիլլերի «Օրլեանի կույսը», Բ. Շոուի «Տիկին Ուորենի դրամունքը», Վ. Վասիլևսկայայի «Կապույտ ծաղիկները», գերմանացի հռչակավոր արևելագետ՝ Խեոգոր Նոլդեկեի «Իրանական ժողովրդական էպոսը» և այլն։

Իրանական կուլտուրայի աշխատողների կազմում 1948 թ. Բ. Ալավին այցելում է Սովետական Միություն։ Վերադառնալուց հետո նա հրատարակում է իր «Ուլբեկները» հրապարակախոսական աշխատությունը, որտեղ շարադրված են հեղինակի տպավորությունները Սովետական Ուլբեկստանի ժողովրդի կյանքի մասին։

1951 թ. Բ. Ալավին հրատարակում է իր պատմվածքների 3-րդ ժողովածու «Նամահ» («Նամակներ»-ը), որի համար արժանանում է համաշխարհային խաղաղության ոսկե մեդալի։ «Նամակներ» ժողովածուի հրատարակությունից անմիջապես հետո, 1952 թ. լույս է տեսնում հեղինակի «Չեմհայաշ» («Նրա աչքերը») վեպը։

Ազգային-ազատագրական շարժումների ճնշումից հետո (1953 թ.) Բ. Ալավին ևսիսկավաճ թողնում է հայրենիքը և մեկնում Արևելյան Գերմանիա, որտեղ մինչև օրս պաշտոնավարում է Բեռլինի համալսարանում որպես իրանական գրականության դոկտոր-պրոֆեսոր։

Սկսած 1955 թ. Բ. Ալավին գրել է մի շարք հրապարակախոսական խոշոր աշխատություններ՝ «Վարդի և Սոխակի երկիրը», «Պայքարող Իրանը», «Արյունոտ նավթը» և այլն, որոնք արդեն թարգմանված են գերմաներեն և չեխերեն լեզուներով։

* * *

Թողորդ Ալավին անցել է գրական-գեղարվեստականության դարգացման երկար ուղի, վերապրելով ստեղծագործական որոնումների բարդ ժամանակաշրջան։

Ուսանողական տարիներին Բ. Ալավին ընկնում է, այդ ժամանակ Գերմանիայում գրականության մեջ խիստ տարածված, ֆրեյդիզմի փիլիսոփայության ազդեցության տակ, որի ստեղծագործական հիմնական մաներան գրականության մեջ հանդիսանում էր հոգեբանական նեղ վերլուծումների մանրամասն նկարագրությունը։ Նվրոպայի մի շարք գրողներ, այդ թվում և Ս. Ցվեյգը, մեծ տպավորություն են գործել երիտասարդ հեղինակի վրա։ Նա մեծ հիացմունքով է խոսում Ս. Ցվեյգի մասին, անվանելով նրան «Նարեդեյի աղաբի» («Գրական հանճար»)՝, թարգմանում է նրա «Սպիտակ ծաղիկներ» պատմվածքը, որ

1933 թ. լույս է տեսնում «Դոնյա» («Աշխարհ») հանդեսում⁷։ Բ. Ալավին մինչև նույն ժամանակ եղել է ռուս մեծ գրող Ֆ. Մ. Դոստոևսկու ազդեցության տակ⁸։ Այդ մասին է վկայում Դոստոևսկուն նվիրված նրա հոդվածը, որը լույս է տեսել «Փայամե նոու» ժուռնալի 1948 թ. առաջին համարում։ Սակայն Բ. Ալավին զերծ չի մնացել նաև իր ազնիվ ընկեր, հուշակավոր գրող՝ Սադեղ Հեգայաթի նախնական շրջանի ստեղծագործությունների ազդեցությունից։ Հայտնի է, որ 30-ական թվականներին Ս. Հեգայաթը գտնվում էր բուրժուական իդեալիզմի փիլիսոփայության ազդեցության տակ և նրա պատմվածքների զգալի մասը կրում էր հոռետեսության ու միստիցիզմի խորը կնիքը⁹։

Նման հեղինակների գրական եղանակը և մյուս կողմից ֆրեյդիզմի փիլիսոփայության ազդեցությունը չէր կարող չդրսևորվել երիտասարդ հեղինակի առաջին գրական ստեղծագործության մեջ¹⁰։

Բողոք Ալավիի պատմվածքների երկրորդ ժողովածուն՝ «Վարադ-փարեհայե զենդան»-ը («Հուշագրեր բանտից») արդեն զգալիորեն տարբերվում է նրա առաջին աշխատությունից։

Գրողն այստեղ նկարագրում է կյանքի ավելի այլանդակ ու դաժան կողմերը։ Ամբողջական իր բովանդակությամբ «Հուշագրեր բանտից» աշխատությունը հագեցված է բողոքի ցասկոտ կրակով ուղղված բոլոր տեսակի բռնության դեմ, և մյուս կողմից, հասարակ ժողովրդի նկատմամբ ունեցած բուռն սիրո զգացումներով։ Գեղարվեստական այս երկը հանդիսացավ տիրող կարգերի անհրավելիությունները մերկացնող մեղադրագիր։

Իր այս երկի մեջ Բ. Ալավին աշխատում է ստեղծել իրականության լայն մի պանորամա։ Նա պատկերում է իրանական բանտի առանձնահատկություններն իր ամբողջական վարք ու բարքով։ Հեղինակը ձգտում է ստեղծել ոչ թե առանձին անհատական կերպարներ, այլ բանտում տառապող մասսաների կյանքի ամբողջական մի պատկեր, որը գեղարվեստական այս երկին տալիս է էպիկական բնույթ։

Բողոք Ալավիի «Հուշագրեր բանտից» գիրքը առաջին անգամ ընթերցողներին ցույց տվեց բանտային աշխարհի կյանքը։ Սակայն ժողովածուի մեջ տեղ գտած պատմվածքների սոցիալական բովանդակությունը շատ ավելի լայն է։ Այն չի պարփակվում միայն բանտի պարիսպների շրջանակում, այլ անցնում է պարիսպների սահմանից դուրս։ Հաճախ Ալավիի մտքերը հասնում են որևէ կալանավորի կատարած առաջին հանցագործության վայրը, նա տեսնում է այդ մարդկանց կյանքի պայմանները Իրանի որևիցե գավառում կամ Թեհրանի խուլ մի թաղամասում։ Հեղինակի կարծիքով բանտարկյալի և «ազատ» մարդու միջև եղած տարբերության միակ չափանիշը, դա կրած տառապանքների քանակն է։ «Գիտես, որ մեր աշխարհը ընդհանուր առմամբ նմանվում է ձեր աշխարհին, — գրում է կալանավորներից մեկը իր կնոջը, — միայն թե նա ավելի փոքր

7 «Դոնյա» Ա տարի, 1933, № 1, ծնթ. թարգմանությունը ստորագրված է կեղծանվամբ «Ֆերեյդուն Նախոդա»։

8 Այդ մասին վկայում է ինքը հեղինակը 1959 թ. փետրվարի 9-ի մեզ ուղղված իր նամակում։ Բացի այդ, Բ. Ալավիի «Հուշագրեր բանտից» պատմվածքների ժողովածուն կրում է Ֆ. Մ. Դոստոևսկու «Записки из мертвого дома» աշխատության ազդեցությունը։

9 Д. С. Комиссаров, նշված աշխ., էջ 69։

10 Բ. Ալավիի առաջին պատմվածքների ժողովածու «Չամադան»-ի մասին տե՛ս Հ. Հ. Մովսիսյան, Բողոք Ալավին և կանանց ազատագրման թեման նրա նովելներում, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ. 1961, № 6, էջ 41։

է և պատած է պարիսպով»¹¹։ Ալավին համոզված է, որ Իրանում ապրող գյուղացու կամ քաղաքում ապրող աղքատի, որոնք չեն կրում իրենց ոտքերին շղթաներ, կամ չեն ենթարկվում մարմնական տանջանքների, և կալանավորի մեջ տարբերությունը մեծ չէ։ Լինում են մարդիկ, որոնք դիտավորյալ կատարում են հանցագործություն, որպեսզի բանտ նետվելով ազատվեն ավելի շարքաշ կյանքից։

Բ. Ալավին գտնում է, որ կալանավորներից շատ-շատերը եթե լինեին սոցիալական այլ պայմաններում, նրանք կգառնային հասարակության համար օգտակար մարդիկ։ «Այս գողի անկեղծությունն ու բարի սիրտը,— գրում է նա,— լավագույն փաստն է այն բանի, որ ապականված հասարակական կյանքի պայմանները անարատ մարդկանց մինչև ինչ աստիճանի են ստորացնում»։

Ղուլամհոսեյնը դատապարտված է երեք տարվա բանտարկության («Փաղանգ» պատմվածքը)¹²։ Նա մեղադրվում է ոճրագործության մեջ, որ իբր փաղանգով ջախջախել է իր որդեգրած տղայի գանդը։ Ղուլամհոսեյնի հանցանքը և սպանության պատճառը ոչ մի կերպ չի հաստատված։ Սակայն նրան շարունակում են պահել բանտում։

Շատ ենթադրություններ ու կարծիքներ կան կատարված այդ ոճիրի համար, բայց բոլորն էլ ապարդյուն։ «Իմ կարծիքը,— գրում է Ալավին,— երևի ոչ մի անհատ մարդու վնաս չպատճառի։ Ինչ ասում եմ, որ այդ ոճիրը կատարել է այն արջը, որը կանգնած է մարդկության առաջադիմության լայն ճանապարհի շեմքին»¹³։ Ակնհայտ է, որ Բ. Ալավին իր ալեգորիկ այս բացատրությունը ինչպիսի ատելության և միևնույն ժամանակ հեգնանքով է խոսում տիրող հասարակարգի նկատմամբ, հասարակարգ, որտեղ թշվառ ու անպաշտպան մարդկանց գլխին միշտ էլ դամոկլյան թրի սլեկաված է ահավոր փաղանգը։

Ժողովածուի մեջ ալքի է ընկնում «Սեթարեյե դոնբալե-դար» («Գիսաստղ») պատմվածքը իր գեղեցիկ կոմպոզիցիայով ու համոզեցուցիչ հոգեբանական նուրբ ճաշակով։

Ռեզաշահյան ոստիկանությունը ձերբակալում է դեմոկրատական հակումներով տարված Իրաջին, նրա ամուսնության երեկոյին։ Աղքատ հայրը պատահմամբ այդ լուրը ստանում է այն ժամանակ, երբ արդեն բոլոր հյուրերը հավաքված սպասում էին Իրաջին։ Չցանկանալով սգի վերածել իր աղքատ կյանքի ամենաերջանիկ օրը, հայրը հայտարարում է հյուրերին, որ Իրաջը շատ անհրաժեշտ դործի պատճառով ուշանալու է, և որ ուրախությունը շարունակվելու է։

Իրաջի նման ազատամիտ երիտասարդներով լի է իրանական բանտը։ Նրանց խոշտանողումների են ենթարկում, որովհետև նրանք համարձակ հայտարարում են, որ «...միջազգային բռնապետությունը ճնշում ու ոչնչացնում է աշխատավոր ժողովրդին»¹⁴։

Բ. Ալավիի օպտիմիզմը միշտ էլ ոգևորում է նրան։ Նա հավատում է Իրաջի և նրա նմանների երկաթյա կամքի տոկոսնությանը։ Նա մեծ սիրով է կրկնում Իրաջի խոսքերը,— «Նս կդիմանամ, դուր ինձ չեք կոտորի։ Ինչո՞ւ էք ուզում

¹¹ «Հուշագրեր բանտից», էջ 89։

¹² Հսկա փայտյա մուրճ րրինձ ծեծելու համար։ (Իրանի գյուղացին այդ մուրճը շարժում է ոտքի օգնությամբ)։

¹³ «Հուշագրեր բանտից», էջ 20։

¹⁴ «Հուշագրեր բանտից», էջ 29։

ոչնչացնել ինձ, միայն նրա համար, որ ես ասում եմ այն, ինչում համոզված եմ — Իրանի ժողովրդին դուք դեպի անկում եք տանում»¹⁵։

Բանտի սոսկալիությունը պատկերելու համար Ալավին դիմում է գրական տարբեր մաներայի «էնթեզար» («Սպասում») պատմվածքում, նկարագրված է բանտում երկար տարիներ սպասելուց խելագարված մի երիտասարդի հոգեկան ծանր ապրումները։ Հոգեբանի հմուտ դիտողականությամբ Ալավին կարողացել է ընդունել այն բոլոր գործոնները, որոնք խելագարության էին հասցրել ֆիզիկապես առողջ այդ կալանավորին։ Բանտում խելագարվողների թիվը անհամար է, և ինչպես հեղինակն է վկայում «...նման դեպքեր սովորական են բանտի համար»։ Անհամար խելագարների շարքից Ալավին ներկայացնում է մեզ միայն մեկ հոգու՝ Սակայն՝ այդ մեկն իր մեջ պարունակում է հագարավոր խելագարների հավաքական կերպարը։ Ահա թե ինչու պարսիկ գրականագետ-քննադատ պրոֆեսոր Փարվիզ Խանլարին համարում է այդ կերպարը «ամենաուժեղը և ամենատպալմորիչը»¹⁶։

Պատմվածքում ստեղծված հոգեբանական երևույթները նույնքան համոզեցուցիչ և այնքան հարազատորեն են կապվում միջավայրի պայմանների հետ, որ ընթերցողն ակամա կարեկցելով խելագարին միևնույն ժամանակ անասելի նողկանք է զգում այն տիրող կարգերի նկատմամբ, որոնք ամենայն անտարբերությամբ մարդուն հասցնում են անասնական վիճակի։ Այս հանգամանքը, վկայում է այն մասին, որ հեղինակը իսկապես հասել է իր գաղափարական նպատակին։

Ալավին ջերմ եռանդով է նկարագրում կալանավորների զգացմունքներն ու խոհերը «Աֆվե օմումի» («Ընդհանուր ներում») պատմվածքում¹⁷։ Երբ հեղինակը տալիս է այն հուզմունքը, որ համակում է կալանավորներին, երբ նրանք լսում են տարածված այն լուրի մասին, թե ընդհանուր ներում է լինելու, ապա մենք զգում ենք, թե որքան ուժեղ են նկարագրված իրադարձությունները և որ հոգեբանական նկարագրություններն այստեղ միջոց են, որպեսզի հեղինակը կարողանա բացահայտել իր հերոսների սոցիալական կյանքով պայմանավորված ներքին աշխարհը։ Հենց այս առումով էլ Բ. Ալավիի «Հուշագրեր բանտից» ժողովածուն գեղարվեստական տեսակետից ավելի մեծ արժեք է ներկայացնում, քան նրա նախկին պատմվածքները։

1942 թ. Իրանի աշխատավորության պահանջով Բ. Ալավին գրում է իր «53 հոգի» գեղարվեստա-հրապարակախոսական ստեղծագործությունը։

Գրքի առաջարանում Ալավին ասում է. «Նս ուղում եմ, որքան կարելի է ավելի հստակ ցույց տալ իմ ընթերցողներին «սև ժամանակաշրջանի» այդ ցեղերին»։ Հեղինակը հրաշալի իրագործել է իր առջև դրված խնդիրը։ Նա մեծ վարպետությամբ կարողացել է ցույց տալ 30-ական թվականներին Իրանում տիրող պետական կարգերն ու ժողովրդի կյանքը։

Վարելով խիստ հակադեմոկրատական քաղաքականություն, ռեպրեսիան պետական ապարատի ոստիկանությունը ձերբակալում է դեմոկրատական շարժման 53 մասնակիցների, որոնց ղեկավարում էր նրանց անձնվեր գաղափարական ընկեր՝ դոկտոր Բադի Էրանին։

¹⁵ Նույն տեղում, 19 26։

¹⁶ Շնախոթին քննարկելն նվիրանդեզանն Իրան, Թեհրան, 1946, էջ 162։

¹⁷ Պատմվածքի սկիզբը մեզ հիշեցնում է Ֆ. Մ. Դոստոևսկու «Записки из мертвого дома» աշխատության առաջարանը։

Բանտում իշխող մռայլ մթնոլորտի ֆոնի վրա, Ալավին ռեալիստական վարպետ վրձինով նկարագրում է 53 հոգու պայծառ կերպարները, որոնք անդրովելի են իրենց գաղափարական համոզմունքների մեջ: Իրանի տառապյալ ժողովրդի շահերի պաշտպանությունը ոգեշնչում է նրանց ավելի աննկուն մնալ բանտի դժոխային խոշտանգումների դեմ: Փաղտնի ոստիկանությունը ամեն միջոց գործադրում է մեղադրելու նրանց հայրենիքի դավաճանության մեջ և ապա դատապարտելու ցմահ բանտարկության, որպես կոմունիստների, չնայած, որ դատարանական կազմի շինովնիկ անդամներից և ոչ մեկը գաղափարանգամ չունենր կոմունիզմի մասին: «Փաղտնի ոստիկանությունը,— գրում է Ալավին,— կոմունիստների շարքին էր դասում նույնիսկ Դարվինին և Ֆրեյդին...»:

Իր աշխատության մեջ Բ. Ալավին մեծ ուշադրություն է դարձրել 53 հոգու անվեհեր պայքարի նկարագրության վրա: Նրանք լավ էին գիտակցում, որ իրենց հաղթանակը միասնական ուժի մեջ է: Այդ պատճառով էլ դոկտոր Թադի էրանիի գլխավորությամբ կազմում են ամրակուռ կուլեկտիվ:

Բանտում գաղտնաբար կազմակերպված էր քաղաքական գիտելիքների դասընթաց: Մեծ դժվարությամբ ձեռք բերված թերթը բարձրաձայն ընթերցվում էր 4—5 հոգու համար, որոնք նշումներ կատարելուց կամ յուրացնելուց հետո, թերթի բովանդակությունը բացատրում էին մյուսներին:

Հեղինակը ոգևորությամբ է խոսում Իրանի դեմոկրատների վեհանձն ղեկավար դոկտոր Թ. էրանիի մասին:

Նվիրական այդ մարդը մինչև վերջին շունչը ոգևորում է ընկերներին, խրախուսում նրանց, որ չհուսահատվեն ամենածանր դժվարություններից, քանի որ ճշմարտությունն է հաղթանակողը: Ալավին սրբությամբ է պահում դոկտոր Թ. էրանիի հիշատակը, նրա պատգամներն ու ազնիվ ձգտումները:

Որպես երգում նա արտասանում է հետևյալ խոսքերը դոկտոր Թ. էրանիի դերեզմանի առաջ՝ «Դոկտոր,— գրում է Բ. Ալավին,— հանգիստ եղիր: Մենք անգործ չենք նստել, մենք աշխատում ենք կատարել քո պատգամները և վաղ թե ուշ կգա այն օրը, երբ մենք կիրականացնենք մեր ձգտումները, որոնք միևնույն ժամանակ քոնն էին»¹⁸: Պատահական չէ, որ հեղինակն իր երկը վերջացնում է հետևյալ խոսքերով. «Եվ այսպես հիսուն երեք հոգու պայքարը բանտի ներսում վերջացավ և այսպես հիսուն երեք հոգու պայքարը բանտից դուրս սկսվեց»:

Հեղինակի ստեղծագործական աճը, անկասկած պայմանավորված էր նրա գաղափարական աճով: Նա գիտակցեց, որ իսկական գրողն ու արվեստագետը, պետք է խորանա իր ժամանակի հասարակական կյանքի մինչև հատակը, պետք է դիտի, ուսումնասիրի այնտեղ կատարվող բարդ իրադարձությունները և արտացոլի դրանք իր ստեղծագործության մեջ:

«53 հոգի»-ն իրանական դրականության մեջ մինչև այժմ էլ մնում է հեղինակի լավագույն երկերից մեկը:

Բողոքը Ալավին գաղափարապես ավելի հասունացած է ներկայանում մեզ իր «Նամահա» («Նամակներ») պատմվածքների 3-րդ ժողովածուի մեջ: Այստեղ նա շոշափում է սոցիալական կարևոր նշանակություն ունեցող հար-

ցնելու, Հեղինակին հետաքրքրել են կանանց ազատագրման հարցը¹⁹, գյուղացիների վիճակը, քաղաքում տիրող աղքատությունը և այլն: Պատմվածքներում կան սոցիալական կյանքի հակասությունների բացահայտման փորձ, աղաղակող անարդարությունների դեմ պայքարելու կամք, ապագան կանխորոշելու ձգտում:

Արժարժեքներով գյուղի թեմատիկան, Բ. Ալավին առաջ է քաշում ժողովրդական կյանքի խորքերը սուզվելու, դեպի ժողովուրդ գնալու և ժողովրդի կողքին կանգնելու առաջավոր մտքեր: 40-ական թվականներին, ոգևորված գյուղացիական շարժումների նոր վերելքով Ալավին դրում է երեք պատմվածք, վերցված իրանական գյուղի կենցաղից. «Աբ» («Ջուր»), «Դեղաշուր»²⁰, «Գիլեմար» («Գիլեցին»): Այս պատմվածքները գրված են ռեալիզմի բնորոշ դիրքերից և հագեցված են ռեալիզմի օպտիմիզմով:

Պատահական չէ, որ հեղինակն իր պատմվածքներից մեկն անվանել է «Ջուր»: Ջրի պակասով տառապում է ամբողջ Իրանի ժողովուրդը, հատկապես գյուղացիությունը: Ջուր կա, բայց այն գտնվում է հողի ստորին շերտերում, պետք են ջրհորներ և ջրաբեր խողովակներ, բայց ավաղ, մինչև այժմ Իրանի իշխող դասակարգի շահամուտությունը դրդել է նրան մտածել միայն այն հորերի մասին, որոնցից նավթ է ցայտում:

Իր ժողովրդի դառը վիճակը լավ է բնութսում պատմվածքի հերոս՝ Ջաֆարը: Այդ իրականության դեմ պայքարելու պատճառով նա բանտարկվել, զանազանվել ու տառապել է: Նստած չոր բլրի վրա, հայացքը նետած դեպի մերկ ու անջրտի դաշտերը, նրա հիշողության մեջ արթնանում է գյուղացիների տասարդ Թահերի արեախանձ դեմքը: Թահերին գյուղի խանն ու ռեսուրսները էին գյուղից, զրկել հողից՝ նրա նշանածին ձեռք ձգելու համար: Քաղցած ու ծարավ Թահերը մեռել էր անապատի այրող արևի տակ:

Հեղինակի նպատակն է ցույց տալ գոյություն ունեցող այն պարագիտային կարգերը, որոնք հնարավորություն են տալիս ֆեոդալին բռնանալու հաղաթուր մարդկանց վրա, չխնայելով անգամ նրանց կյանքը: Ջաֆարը խորշում է նաև քաղաքի վերնախավից: Այդ դիմակավորված մարդիկ միայն և միայն բնկած են անձնական շահերի ետևից: Ջաֆարը համարձակվել է ճշմարտությունն ասել նրանց ճակատին: Նրան հալածել են: Նա ևս Թահերի պես դարձել է թափառաշրջիկ՝ ոստիկանության հետապնդումից հեռու մնալու համար: Դիտելով Իրանի ամայի դաշտերն ու անապատները Ջաֆարը մինչ հոգու խորքը զգում է այն դառը իրականությունը, որը համակել է միլիոնավոր մարդկանց կյանքը:

Բողոքող Ալավիի պատկերած դյուղացիները ճնշված են, խարխափում են խավարի ու տգիտության մեջ, սակայն չեն հաշտվում իրենց վիճակի հետ: Կարևորն այն է, որ նրանց բողոքը ելնում է գյուղի բնույթից: Նրանք բողոքում են գյուղում տիրող խավարի, աղքատության ու շահագործման դեմ, գյուղն ու գյուղացուն մոռացած քաղաքի դեմ:

Մերոնի Մաշ-Հուսեյնյանին («Դեղաշուր») երեսուն տարի շարունակ մեջք է ծոկել ու մշակել աղայի այգին: Նրա միակ նպատակն է, որ իր աղջիկ՝ Համի-

¹⁹ Այդ մասին մանրամասն տե՛ս Հ. Հ. Մովսիսյան, Բողոքող Ալավին և կանանց ազատագրական թեման նրա նովելներում, «Տեղեկագիր» Հայկական ՍՍՌ ԳԱ, 1961, № 6, էջ 41:

²⁰ Գյուղ՝ Թահերանի հյուսիսային մասում:

դեն ավարտի քաղաքի ուսումնարանը, դառնա բժշկուհի, վերադառնա գյուղ և փրկի բնակչությանը հիվանդությունից ու մահից:

Ազնիվ ծերունին ոչինչ չի խնայում աղջկան օգնելու համար. «Քանի շունչ կա բերնումս,—ասում է ծերունին,—ես կաշխատեմ, որ աղջիկս մարդ դառնա»: Սակայն քաղաքի կյանքը կլանում է Համիդին: Նա այլևս մտադիր չէ գյուղ վերադառնալու²¹:

Ալավին մոտիկից է ճանաչել իրանական դուզը: Նա ուսումնասիրել է պարսիկ գյուղացու կյանքը, վարք ու բարքը, նրա իղձերն ու կարիքը և այս բոլորը ռեալիստական հմուտ գրչով վերարտադրել իր պատմվածքում:

Ծերունի Մաշ-Հուսեյնալիի տրտունջքի մեջ ընթերցողը պարզորոշ լսում է Իրանի հետամնաց գյուղերից մեկի ձայնը: Նա պատմվածքում հանդես է գալիս որպես դասակարգի տիպիկ ներկայացուցիչը, տիպական հանգամանքներում: Նա խոսում է բոլոր գյուղացիների անունից: Ծերունու դատողությունները, պարսիկ գյուղացիների դատողություններն են, որոնք նույնպիսի թշվառ պայմաններում են ապրում, ինչպես ինքը Մաշ-Հուսեյնալին:

Մաշ-Հուսեյնալիի դատողությունները իրենց նախնական յուրահատուկ են XX դարի իրանական պարզամիտ գյուղացուն: Նա համոզված է, որ գյուղը կարելի է փրկել կրթված ու լուսավորված անհատների միջոցով: Նա ուզում է, որ ինտելիգենցիան գա գյուղ և փրկի ժողովրդին տառապանքներից: Ալավին խորն է զգում գյուղացու մտքերը, սակայն ինչպես ցույց է տալիս հեղինակը, այդ իղձերը չեն կարող իրականացնել Համիդի նման անհատ ինտելիգենտները: Բ. Ալավիի նպատակն է Համիդի կերպարով ցույց տալ Իրանի գյուղացուն, որ քանի դեռ կապիտալիստական հասարակարգում գյուղի և քաղաքի միջև գոյություն ունի սուր հակասություն, ապա ոչ միայն քաղաքի ինտելիգենտը գյուղ չի գնա, այլ նույնիսկ քաղաքում ինտելիգենտ դառած գյուղացին, որն արդեն ձուլվել է բուրժուական հարաբերությունների ալիքների մեջ, մոռացել է գյուղը և միմիայն մտահոգված է ստեղծելու սեփական կարիերա: Պատահական չէ, որ հեղինակն իր պատմվածքի վերջում ծերունի Մաշ-Հուսեյնալիին նրա հույսերի հետ թաղում է ձյան տակ, կերտելով նրա կողքին գիլեցու հերոսական կերպարը «Գիլեմարգ» («Գիլեցին») պատմվածքում:

«Գիլեցին» պետք է համարել Բ. Ալավիի ռեալիստական պաթոսով զրբված ուժեղագույն պատմվածքներից մեկը: Գիլեցիի կերպարում հեղինակը տալիս է ժողովրդի ազատության համար պայքարի ելած գյուղացուն:

Երիտասարդ գիլեցին համագյուղացիների հետ մեկտեղ ապստամբել է տարիներ շարունակ գյուղը թալանող ֆեոդալ տերերի դեմ: Նրանք արդեն լավ են հասկանում ժանդարմների կատարած անիրավությունները: «Դուք մեզ թալանում եք,—ասում են գյուղացիները,—վռնդում եք մեր տնից և տեղից... Ձերբակալում եք գյուղացիներին, էլ ոչ մի տնտեսություն չթողեցիք մեզ համար»:

Բ. Ալավին նպատակադրել է ցույց տալ Իրանի գյուղացուն, որ խնդրանքով ու աղաչանքով հնարավոր չէ ազդել ֆեոդալի վրա, որ անհրաժեշտ է զենք ունենալ, զենք գործածել:

21 Հետաքրքիր է նշել, որ «Դեզաշուր» պատմվածքն իր բովանդակությամբ հիշեցնում է մեզ հայ ռեալիստ գրող Մուրադանի «Նոյի աղոսվը» պատմվածքը:

«Այն ճնշված դասակարգը,— գրում է Վ. Ի. Լենինը,— որը չի ձգտում սովորել զենքին տիրապետելու, զենք ունենալու, այդպիսի ճնշված դասակարգն արժանի կլինի լուրջ անհաջողության, որ նրա հետ վարվեն, ինչպես ստրուկների հետ»²²։

Ժանդարմների կողմից ձերբակալված երիտասարդ գիլեցիի ուշադրությունը կենտրոնացած էր զենք ձեռք բերելու վրա։ «Ախ, երանի թե այս ժանդարմներից մեկի հրացանը իմը լիներ։ Ինձ այլևս չէին կարող ձերբակալել... Որքան լավ է զենք ունենալը»։ Ահա այն մտքերը, որոնք շարունակաբար անհանգստացնում էին գիլեցուն։

Բողոք Ալավիի ռեալիստական այս պատմվածքին բնորոշ է գործողությունների լարված զարգացումը, որը վերջանում է ողբերգական վախճանով։

Հեղինակի ուշադիր դիտողականությունից չի վրիպել նաև քաղաքում ապրող մարդկանց թշվառությունը։ Կապիտալիստական հարաբերությունների օրըստօրե զարգացումը սնանկացրել է քաղաքի մանր արհեստավորներին, զրկելով նրանց ապրուստի ամենաչնչին միջոցներից։ «Էջարե-խանե» («Տան վարձը») պատմվածքում Բ. Ալավիին նկարագրում է Իրանի հասարակության ստորին խավի կյանքը, իրականությունը իր ամբողջական պատկերով։ Կարիքը, քաղցը, անարդարությունը բարոյալքել են այդ մարդկանց։

Չգտնելով իրեն, թե ինչպես Բ. Ալավիի սիրտը լայն է բացված, մարդկանց վիշառը ընդունելու համար։ Պատմվածքի տողերում լսվում է հառաչ, զգացվում է կարիքն ու զրկանքը գիտակցելուց առաջացած մարդկային հոգու վիշտը։ Սակայն հեղինակի օպտիմիզմը ևս թույլ չի տալիս նրան ներկայացնել իր հերոսների ողբերգական վախճանը առանց պայքարի։ Աղքատության ճիրաններում գալարվող այդ մարդկանց մեջ դեռևս բուրրովին չեն մեռել մարդկային բնավորության ազնիվ կողմերը։ Նրանք դարձյալ մնում են հավատարիմ մարդ հասկացողության արժանապատվությանը։

Իր գաղափարական բովանդակությամբ Բողոք Ալավիի լավագույն պատմվածքներից էտ չի մնում «Զաշմհայաշ» («Նրա աչքերը») վեպը, որը նա հրատարակեց 1952 թ. վերջերս։

30-ական թվականների, Իրանի պատմության ծանր ժամանակաշրջանի քաղաքական ֆոնի վրա, Ալավին ճշմարտացիորեն արտացոլել է նույն ժամանակի դեմոկրատ-ինտելիգենտների պայքարի գործողությունները՝ ուղղված ռեզաշահյան բռնապետության ու օտարերկրյա իմպերիալիստների դեմ։ Հեղինակը նպատակադրել է ցույց տալ իր վեպի գլխավոր հերոս նկարիչ Մաքանի ռևոլյուցիոն կերպարը։ Գաղափարական այդ հերոսը, նվիրված հասարակական սրբազան աշխատանքին, հրաժարվում է իր անձնական կյանքի հաճույքներից, իր սիրուց և ամուսնությունից։ «Իմ ճակատագիրը, ասում է Մաքանը,— անբաժան է իմ երկրի ճակատագրից։ Ինձ համար գոյություն չունի անձնական բախտավորություն»²³։

Վեպում աչքի է ընկնում Մաքանին անզուսպ սիրող Ֆարանգիսը։ Սակայն այդ երկու սիրահարները գաղափարապես տարբերվում են իրարից։ Ազնվական ծագումով այդ գեղեցիկ աղջկան չի հետաքրքրում իր շրջապատում կատարվող ռևոլյուցիոն եռուն աշխատանքը։ Նա միայն տարված է այդ շարժ-

22 Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 23, էջ 96։

23 «Նրա աչքերը», Քեհրան, 1952, էջ 214։

ման ղեկավար՝ Մաքանի սիրով, և հենց այդ սերն էլ ստիպում է աղջկան կատարելու նույնիսկ վտանգավոր հանձնարարություններ։ Մաքանը մինչև իր ձերբակալությունը ոստիկանության կողմից, մինչև իր զոհվելը բանտարկության մեջ, հավատարիմ է մնում իր ժողովրդի իդեալական պայքարին։

Ինչպես տեսնում ենք Բ. Ալավին իր առջև դրել էր մեծ խնդիր՝ տալ իր երկրում ամբողջ մի պատմական ժամանակաշրջան, համակված երկու հակադիր լազերների քաղաքական պայքարի սուր հակասություններով։ Գուցե հեղինակին ավելի հաջողվեր իր վեպի գաղափարականությունը լարձրացնել, եթե նրա ուշադրությունը չշեղեր Ֆարանգիսի բուռն սերը։ Ֆարանգիսի սիրո զգացմունքների նկարագրությունները այնքան հորդ են և այնքան երկարաշունչ, որ իր լիրիկական զեղումների տակ համարյա նսեմացնում է Մաքանի և նրա ընկերների կատարած հասարակական աշխատանքի կարևորությունը, նրանց անձնագոհությունը ժողովրդի գալիք ապագայի համար, որն ըստ երևույթին պետք է կազմեր վեպի գաղափարական բովանդակության առանցքը։ Հաճախ Ֆարանգիսի կյանքի, նրա ապրումների էպիզոդային նկարագրությունների մեջ է, որ երևում է Մաքանը իր գաղափարակից ընկերների հետ։ Գրական այս մաներան, մասամբ իջեցնում է վեպի ռեալիստական արժանիքը, տալով նրան ռոմանտիկ գունավորում, որից հեղինակը հեշտությամբ կարող էր խուսափել։

Այս թերություններով հանդերձ, իրանական արձակ գրականության մեջ «Նրա աչքերը» վեպը իր գեղարվեստական առավելությամբ և ռեալիստական ոճով առաջինն էր, որ մեծ հետաքրքրություն առաջ բերեց Իրանի հասարակության լայն խավերում։ Մեծ ոգևորությամբ կրված այս վեպը, վառ պահեց Իրանի աշխատավորության մտքում իրենց ազատության համար պայքարող մարտիկների կատարած սխրագործությունների հիշատակը, որով և հպարտանում է հեղինակը՝ իր վեպի սկզբում, որպես էպիգրաֆ տալով Սաադիի հետևյալ երկտող գազելը.

Ասում են ինձ, էլ մի երգիր նրա սերը ով դու Սաադի,

Բայց ես կերգեմ ու կերգեն դեռ ինձանից հետո դարեր անթիվ։

«Նրա աչքերը» վեպը իր ռևոլյուցիոն-թեմատիկ բովանդակությամբ կարևոր շրջադարձ մտցրեց Իրանի վիպագրության մեջ։ Գեղարվեստական այդ երկը նոր հեռանկար ու նոր խնդիրներ դրեց պարսիկ արձակագիրների առջև՝ լուրջ եզրակացություններ անելու իրենց գրական ստեղծագործությունների թեմայի ընտրության, նրա գաղափարականությանը վերաբերող հարցերում։

* * *

Բողոք Ալավին առաջադիմական նոր քայլ կատարեց XIX—XX դարերի միջասահմանում պարսկական արձակ գրականության մեջ սկսված քննադատական ռեալիզմի զարգացման ուղղությամբ²⁴։ Նա խորապես ըմբռնեց

²⁴ М. Шойтов-ը իր «Некоторые особенности творческого метода Бозорга Алави» հոդվածում եզրակացություններ է կատարել մեծ մասամբ կանգ առնելով Բ. Ալավիի «Նրա աչքերը» վեպի մանրամասն վերլուծության վրա։ См. Краткие сообщения института востоковедения, № XXXVI, М. 1959, էջ 23։

Ֆեոդալական ու բուրժուական հասարակարգերի բուն էությունը, և իր ստեղծագործության մեջ հստակորեն ցույց տվեց նրանց հակամարդկային ու այլանդակություններով լի բարոյականությունը:

Բողոք Ալավին կանգնած շմաց քննադատական ունալիդի դիրքերում:

1946 թ. հունիսին Թեհրանում կազմակերպված իրանական գրողների առաջին կոնգրեսում²⁵ Բ. Ալավին ասաց. «Այսօր ընթերցողների մեծ մասը կազմում են մեր հասարակության ստորին և միջին խավերը: Պետք է իմանալ թե ինչ են ուզում նրանք և առաջարկել նրանց այն, ինչ որ ցանկանում են»²⁶:

Հասկանալի է, որ պահանջելով նոր բովանդակություն Բողոք Ալավին միևնույն ժամանակ պայքարում էր նոր մեթոդի համար: Իսկ ժողովրդական մասսաների պայքարը, ատելությունը, նրանց ձգտումներն ու իդեալները ճշմարտացիորեն պատկերելու համար, անհրաժեշտ էին հիմնավորել սոցիալական նոր հայացքներ, էսթետիկական որոշակիությամբ տեսնել այն նորը, որ խմորվում է հասարակական կյանքի զարգացման ընթացքում:

Բողոք Ալավիի «Հուշագրեր բանտից» պատմվածքների ժողովածուն, «53 հոգին» և «Նրա աչքերը» վեպը ընդգրկում է պատմական մի ամբողջ ժամանակաշրջան: Ոչ ոք մինչև Բ. Ալավին այդպես կենսական լրիվ ճշմարտություն մ ու գեղարվեստական նուրբ ճաշակով չի պատկերել այն ֆեոդալական կարգերն ու բուրժուական բարոյալքվածությունը, որոնց հովանավորում էր ուղղաշահյան բռնապետական կառավարությունը:

Օժտված գեղարվեստական վառ երևակայությամբ, Բ. Ալավին միևնույն ժամանակ երբևէ չի նահանջում իրականությունը նկարագրելու իր համոզմունքներից, որոնք ամենայն կատարելիությամբ կիրառվում են նրա ստեղծագործության մեջ իրենց որոշակի արտահայտիչ դետալներով:

Պատահական չէ, որ քննադատ էհսան Թաբաթին «Հուշագրեր բանտից» գրքի մասին գրում է. «Ես, բանտում կատարվող բոլոր իրադարձությունների ժամանակ եղել եմ հեղինակի հետ միասին: Նրբ կարդում եմ այդ գիրքը, կարողանում եմ լավ վերլուծել այն: Գիտեմ, որ այս կամ այն հոգեբանական երևույթների նկարագրությամբ ո՞ւմ է նկատի ունեցել հեղինակը: Կամ նկարագրված այս կամ այն կերպարը քանի մարդկանց բնավորության ընդհանուր գծերի մարմնավորումն է ներկայացնում և ովքեր են դրանք»²⁷:

Բողոք Ալավիի առավելությունը նրանումն է, որ խորապես զգալով սոցիալական կյանքի էական հարցերը, իր ժողովրդի ձգտումներն ու երազանքը, համարձակորեն խարազանում է նաև ժողովրդի թշնամիներին, կաշառված դատավորներին, վաշխառուներին, գյուղական ցեղերին և կեղծ ու դիմակավորված դեմոկրատներին: Նա տեսավ իրանի աշխատավորության ու առաջավոր ինտելիգենցիայի դառը տանջանքները, անսահմանորեն սիրեց նրանց ու հավատաց նրանց ուժին:

Բողոք Ալավիի քննադատական ունալիդի տոգորված է ուղղություն ու մանտիզմով: Առաջադիմական այս քայլը իրանական գրականության մեջ որ-

²⁵ Կազմակերպված էր իրանա-սովետական կուլտուրական փոխադարձ կապի կազմակերպության կողմից:

²⁶ «Նախասթին քոնդարեյն...», էջ 184:

²⁷ «Մարդոմ» թերթ, 1-ին տարի № 28, Թեհրան, 1941:

պես նոր ուղղություն, պատկանում է Բոզորգ Ալավիին: «Ժամանակակից արտասահմանյան երկրներում,—գրում է Տ. Լ. Մոտիլովան,—սոցիալիստական ռեալիզմը և քննադատական ռեալիզմը հանդես են գալիս, ոչ թե որպես հակառակորդներ, այլ որպես դաշնակիցներ: Նրանց միացնող ընդհանուր կետերը րիչ չեն»²⁸:

Ելնելով այս տեսակետից, կարելի է համարձակ ասել, որ Բոզորգ Ալավիի վերջին մի քանի պատմվածքներում կիրառած գրական մեթոդը, դուրս գալով քննադատական ռեալիզմի սահմաններից, ընդհուպ մոտենում է սոցիալիստական ռեալիզմի մեթոդին:

Նշված առավելություններով հանդերձ Բ. Ալավիի ստեղծագործությունները զերծ չեն նաև որոշ թերություններից: Այդ ստեղծագործությունների հետ ուշադիր ծանոթությունը բերում է մեզ այն եզրակացության, որ համեմայն դեպս Բ. Ալավին դեռևս վերջնականապես չի ազատվել Իրանի հասարակական կյանքի ախտերը քննադատելու սահմանափակվածությունից: Իրենց զաղափարական բովանդակությամբ նրա երկերը բաց են անում ընթերցողի աչքերը՝ տեսնելու կյանքի բացասական կողմերը, առաջացնելով նրա մեջ արհամարհանք և ատելություն դեպի բռնությունն ու շահագործումը: Սակայն «ի՞նչ անել» հարցի պատասխանի դիմաց նրանք հիմնականում մնում են լուռ: Ինչ վերաբերում է այն ստեղծագործություններին, որոնք տողորված են բռնապետական կարգերի դեմ ուղղված բողոքի ու պայքարի կոչով («53 հոգի», «Հուշագրեր բանտից», «Գիլեցին» և այլն), ապա նման ստեղծագործություններում տեղ գտած հերոսները առայժմ մեծ մասամբ մնում են միայնակ, սոցիալական կյանքի հակասությունների բախման պայքարում: Մյուս կողմից, Բ. Ալավիի վեպերում ու պատմվածքներում դեռևս իրենց պատշաճ արտացոլումը չեն գտել աշխատավորության ու ժողովրդական մասսաների շարժումները, այն դեպքում, երբ իրանական ժողովրդի պայքարի պատմությունը այդ կապակցությամբ կարող է մատուցել բավական ուժեղ ու բովանդակալից թեմաներ, որոնք կարող են դրական մեծ նշանակություն ունենալ նոր սերնդի պրոգրեսիվ պայքարի դաստիարակության հարցում:

Անհրաժեշտ է նշել, որ այս երևույթը միայն Բ. Ալավիին չէ հատուկ: Իտպատերազմյան շրջանի իրանական արձակի բուռն վերելքի ժամանակամիջոցում առաջադեմ շատ հեղինակների աշխատություններում նկատվում է այդ բացը, որ կարելի է ասել համարյա ընդհանուր բնույթ է կրում Իրանի ներկա դեմոկրատ գրողների մոտ²⁹:

Այնուամենայնիվ վերջին տարիներում իրանական արձակը աչքի ընկնող հաջողությունների է հասել՝ ընդգրկելով իր մեջ նոր բովանդակություն, նոր դրական ու բացասական կերպարներ: Իրանական արձակագիրները ձգտում են իրենց ստեղծագործություններում կերտել այնպիսի կերպարներ, պայքարի

28 Т. Л. Мотылова, О социалистическом реализме в зарубежных литературах. М. 1959, էջ 25—26.

29 Д. С. Комиссаров, Образ положительного героя в современной персидской художественной прозе. Краткие сообщения института востоковедения, № XVIII, М., 1955. էջ 64.

ելած այնպիսի մարդկանց, ինչպիսիք իրոք գոյություն ունեն կյանքում: Նրանք փորձում են ցույց տալ իրենց հերոսի մեջ մարմնավորված այնպիսի արժանիքներ, որոնցից կարելի է կյանքի, աշխատանքի և պայքարի համար դրական օրինակներ վերցնել: Այս իսկ տեսակետից Բ. Ալավիի ստեղծագործություններն իրենց ուրույն նշանակությունն ունեն Իրանի հասարակայնության լայն խավերի համար: